

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
«ՎԱՐՉԱԻՐԱՎԱԿԱՆ»
ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ: ՄԻԵԴ
ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ
ԻՐԱՎԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ



**Հայաստանում քրեաիրավական երաշխիքների կիրառումը
«վարչաիրավական» հարաբերություններում: ՄԻԵԴ
չափանիշները և ՀՀ ներպետական իրավական խնդիրները**

Գևորգ Հակոբյան



Երևան 2011

Գ. Հակոբյան, Հայաստանում քրեաիրավական երաշխիքների կիրառումը «վարչաիրավական» հարաբերություններում: ՄԻԵԴ չափանիշները և ՀՀ ներպետական իրավական խնդիրները, առցանց: Հայ բաց իրավաբանական բլոգ, <<http://armenianlegal.info/archives/687>>

© Գևորգ Հակոբյան

Հայ բաց իրավաբանական բլոգ – Armenian Open Legal Tumblog

<http://armenianlegal.info/>

Ձևավորումը՝ Գ.Հ.

Կազմի վրա օգտագործված նկարի հեղինակային իրավունքները պատկանում են Եվրոպայի խորհրդին. նկարը օգտագործված է վերջինիս կայքում զետեղված պաշտոնական թույլատրությանը համապատասխան:

Գևորգ Հակոբյանի «Հայաստանում քրեաիրավական երաշխիքների կիրառումը «վարչաիրավական» հարաբերություններում: ՄԻԵԴ չափանիշները և ՀՀ ներպետական իրավական խնդիրները» աշխատանքը Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիայի և հոլանդական Ստիչթինգ Օքսֆամ Նովիբ կազմակերպության կազմակերպած 2010թ. մրցույթի գլխավոր մրցանակին արժանացած հոդվածն է՝ հեղինակի որոշակի խմբագրական շտկումներով: Այն քննարկում է ՄԻԵԴ չափանիշների և Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված իրավունքների և երաշխիքների՝ ՀՀ ներպետական մակարդակում արդյունավետ իրացման հիմնահարցերը:

Տեղեկությունների համար դիմել՝

info@armenianlegal.info

Ձեկույցում հեղինակի արտահայտած տեսակետը անհրաժեշտաբար չի համընկնում Հայ բաց իրավաբանական բլոգի տեսակետի հետ:

Երևան, 2011թ.



Բովանդակություն

Ներածություն

2

Քրեաիրավական հասկացությունները որպես ինքնավար հասկացություններ:

6

Էնգելի չափանիշները

9

Չափանիշների և երաշխիքների կիրարկումը վարչաիրավական հարաբերություններում

15

Դատավարական հարցեր, օրենսդրական կարգավորումներ և մեկնաբանության խնդիրներ

20

Եզրակացություններ և առաջարկներ

24

Օգտագործված գրականության ցանկ

25



Ներածություն

Ժամանակ առ ժամանակ պատահում է, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ ՄԻԵԴ), կիրառում է Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին Կոնվենցիայի¹ (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում ամրագրված քրեաիրավական երաշխիքները սկզբնապես «ոչ քրեաիրավական բնույթի» համարվող հարաբերությունների նկատմամբ: Օրինակ՝ ՄԻԵԴ-ը հանկարծ գտնում է, որ հարկային տուգանքի նկատմամբ կիրառելի են քրեաիրավական բնույթի երաշխիքները, չնայած Պետության լուրջ ջանքերին՝ համոզելու Դատարանին, որ հարկային տուգանքը չի զետեղված իր ներպետական քրեական օրենսգրքում: արդյունքում պետությունը պատասխանատվության է կանչվում Կոնվենցիան խախտելու համար, որովհետև չէր կիրառել Կոնվենցիայով նախատեսված քրեաիրավական որևէ երաշխիք ներպետական մակարդակում: Դատարանը հայտարարում է, որ նման գործը իր իրավասության ներքո է², և քննելով այն՝ հայտնաբերում է Կոնվենցիայի խախտում, կամ գտնում է, որ այդպիսի խախտում առկա չէ:

Եթե քրեաիրավական բնույթի երաշխիքները կիրառելի են տվյալ իրավահարաբերության նկատմամբ, ապա այդ իրավահարաբերությունը իր բնույթով քրեական է եղել: սա նշանակում է, որ պետությունը թույլ է տվել

¹ Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Nov. 4, 1950, Europ.T.S. No. 5; 213 U.N.T.S. 221.

² Իրավասու է, որովհետև պաշտպանվում է Կոնվենցիայով (*ratione materiae*). Հակառակ դեպքում, եթե տվյալ իրավահարաբերությունը չի կարգավորվում Կոնվենցիայով, ՄԻԵԴ-ը չի կարող դրա վերաբերյալ գործը քննել: Տե՛ս Chittharanjan F. Amerasinghe, Jurisdiction of International Tribunals, 755-756 (2003). Տե՛ս նաև Philip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, 2nd ed., 155 (2005) [Leach]:



իրավահարաբերության սխալ ներպետական դասակարգում, որով ՄԻԵԴ-ը որոշել է կաշկանդված չլինել³:

Այսպիսով, առաջին խնդիրը, որն առաջանում է, կապված է իրավահարաբերության ճիշտ դասակարգման հետ: Ինքնիշխանության տեսանկյունից պետությունները ազատ են իրենց հայեցողությամբ կարգավորելու այս կամ այն իրավահարաբերությունները: Պետություններն այդ հարաբերությունները դասակարգում են տարբեր օրենքներում կամ օրենսգրքերում՝ ելնելով այն հանգամանքից, թե ինչպես են պատկերացնում այդ հարաբերությունների բնույթը, կամ ինչպես են ցանկանում այդ հարաբերությունները կարգավորել. դա պետության քաղաքականությունն է: Օրինակ՝ Հայաստանում քրեական հանցանքները կարգավորվում են ՀՀ Քրեական օրենսգրքով, վարչական սանկցիաները՝ ՀՀ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով: Սակայն պայմանավորված լինելով հենց հիշյալ պետական քաղաքականությամբ՝ սովորաբար այս կամ այն դասակարգումը արտացոլում է այս կամ այն իրավական հետևանքը: Օրինակ՝ եթե արարքը և պատասխանատվությունը պետությունը դասակարգել է ներպետական վարչական օրենսդրությունում, ապա սովորաբար դատվածություն չի առաջանում⁴: Սակայն ինչպես է պատահում, որ ՄԻԵԴ-ը հայտնաբերում է, որ հարկային տուգանքը իր բնույթով քրեական է եղել:

Երկրորդ խնդիրը վերաբերում է այդ իրավահարաբերության կոնկրետ իրավիճակում կարգավորմանը, այսինքն ի՞նչ անել, որպեսզի արդեն իսկ կատարված դասակարգումը չունենա այնպիսի իրավական հետևանքներ, որոնք կարող են խախտել Կոնվենցիան:

³ Այս երևույթը կքննարկվի ստորև:

⁴ Տե՛ս George Letsas, The Truth in Autonomous Concepts: How To Interpret the ECHR, EJIL, Vol. 15, No. 2, 281 (2004) [Letsas]



Այս հարցի համար կան մի քանի լուծումներ: Մի լուծումը իրավահարաբերության վերադասակարգումն է, երբ իրավասու պետական մարմինը, օրինակ՝ Ազգային ժողովը, իրավահարաբերությունը կարգավորման մի ոլորտից տեղափոխում է մեկ այլ ոլորտ⁵: Վերադասակարգումը կարող է արդյունավետ լինել այնքանով, որքանով օրենսդիրը իր քաղաքականությունը պայմանավորում է զուտ իրավական չափանիշներով:

Երկրորդ լուծումը չվերադասակարգված իրավահարաբերությունների վերագնահատումն է: Այսինքն՝ երբ կոնկրետ իրավիճակում հայտնաբերվում է իրավահարաբերության դասակարգման թերությունը, այդ իրավիճակում թերությունը շտկվում է՝ լրացուցիչ այնպիսի երաշխիքներ կիրառելով, որոնք բացակայում են թերության հետևանքով: Խոսքը դատական վերահսկողության մասին է, որի արդյունավետության բարձրացմանն էլ նվիրված է սույն աշխատանքը:

Այսպիսով, առկա են այնպիսի իրավահարաբերություններ, որոնցում քրեաիրավական երաշխիքներ ամրագրված չեն, որովհետև այդ իրավահարաբերությունները չեն դասակարգվել որպես քրեաիրավական: Այսպիսի իրավահարաբերությունների ոլորտ է, ի թիվս այլոց, (և ինչպես ցույց կտրվի ստորև) այժմյան «վարչաիրավական» հարաբերությունների մի հատված:

Սույն աշխատանքում կքննարվի այն հարցը, թե որոնք են իրավահարաբերության ճիշտ քրեաիրավական դասակարգման հիմքում ընկած չափանիշները ըստ ՄԻԵԴ-ի, որոնց միջոցով հնարավոր լինի ընդհանուր զանգվածից զտել վերադասակարգման կամ վերագնահատման ենթակա իրավահարաբերությունները. այդ չափանիշների միջոցով կզտվեն մի խումբ իրավահարաբերություններ վարչաիրավական ոլորտից և այդ իրավահարաբերություններում ստուգման կենթարկվեն, թե արդյոք առկա են

⁵ Օրինակ, 2010թ. զրպարտության վերաբերյալ իրավահարաբերությունները դուրս բերվեցին քրեական ոլորտից և տեղափոխվեցին քաղաքացիաիրավական:



քրեաիրավական երաշխիքներ, թե՛ ոչ. եթե այդպիսի երաշխիքներ առկա չեն, ապա հեղինակը կփորձի պատասխանել, թե ինչպիսի խնդիրների կարելի է բախվել դրանք շտկելիս և ինչպես ապահովել այդ երաշխիքները վերագնահատում-վերահսկողության միջոցով:



Քրեաիրավական հասկացությունները որպես ինքնավար

հասկացություններ:

1971թ. Կորնելիս Էնգել անունով մի սերժանտ, ինչպես նաև չորս այլ զինվորականներ, որոնք ծառայում էին Նիդերլանդների զինված ուժերում և որոնց նկատմամբ զինվորական տրիբունալները պատիժներ էին սահմանել զինվորական զանցանքների համար, դիմել էին ՄԻԵԴ: Դիմողները պնդում էին, որ խախտվել է նրանց՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով պաշտպանվող իրավունք, որովհետև «զինվորական կարգապահական պատասխանատվության» ենթարկելիս՝ նրանց համար չէին ապահովել իրավունքների դատական պաշտպանություն: Նիդերլանդների կառավարությունը պատասխանել էր, որ 6-րդ հոդվածի խախտում չկա, որովհետև դիմողների դեմ հարուցված քննությունները չեն ներառել ո՛չ Դիմողների «քաքաքացիական իրավունքներ և պարտականություններ», ո՛չ էլ որևէ «քրեական մեղադրանք», ինչպես նախատեսված է հոդվածով: Այսպիսով Նիդերլանդները պնդում էին, որ դիմողների նկատմամբ կիրառված պատասխանատվությունը կարգապահական է:

ՄԻԵԴ-ն ընդունեց, որ կարգապահական պատասխանատվության և քրեական պատասխանատվության միջև տարանջատումը հստակ էր և արտահայտում էր կարգապահական զանցանքների և քրեական հանցանքների միջև ձևավորված բազմամյա ներպետական տարբերակումը: Առաջինները նվազ խիստ են, չեն առաջացնում դատվածություն և ավելի քիչ հետևանքներ են առաջացնում քան երկրորդները: Սակայն, մյուս կողմից, քրեական վարույթները ավելի շատ երաշխիքներ են պարունակում մեղադրյալների համար⁶: Էնգելի և մյուսների դեպքում Նիդերլանդների ներպետական օրենսդրությամբ արարքները չէին

⁶ Case of Engel and Others v. The Netherlands, 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, §80, ECHR 1976-A22 [Engel Case]



դասակարգվել քրեական օրենսդրությունում, և այդպիսի դասակարգման դեպքում կարելի էր կանխատեսել, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չէր տարածվի կարգապահական պատասխանատվության վրա, և հետևապես այն չէր տրամադրի պաշտպանություն զինվորական պատասխանատվության համար⁷:

Սակայն ՄԻԵԴ-ը չբավարարվեց այսպիսի տրամաբանությամբ: Դատարանը տվեց հետևյալ հարցը. «արդյո՞ք Կոնվենցիայի տեսանկյունից ներպետական օրենսդրության լուծումը որոշիչ է: Արդյոք 6-րդ հոդվածը չպետք է կիրառվի, որովհետև Կողմ պետությունների իրավասու մարմինները տվյալ գործողությունը կամ անգործությունը և արարքը կատարողի նկատմամբ կիրառվող վարույթը որակել են որպես կարգապահական, թե՛ ընդհակառակը՝ պետք է կիրառվի որոշ դեպքերում՝ չնայած առկա է դասակարգումը»: ՄԻԵԴ-ն իր անհանգստությունն արտահայտեց, որ դիտավորյալ, թե առանց դիտավորության՝ Կողմ պետությունները կարող են որոշ գործողություններ կամ անգործություններ դասակարգել որպես կարգապահական զանցանքներ այնպես, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը չտարածվի վերջիններիս վրա: Եվ իսկապես, եթե պետությունները կարողանային զուտ իրենց հայեցողությամբ դասակարգել քրեական հանցանքները որպես կարգապահական, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի հիմնարար դրույթները կզրկվեին արդյունավետությունից⁸:

Ելնելով վերոգրյալից և հետևելով դեռևս Կոմիտեի որոշ սկզբնական բանաձևերի՝ ՄԻԵԴ-ը կիրառեց մի լուծում, որը կոչվում է «*theory of autonomous concepts*»՝ ինքնավար հասկացությունների տեսություն, որը մի կողմից չի կարող

⁷ Letsas վեր. հղ. 4, նույն էջում:

⁸ Տե՛ս *Engel Case* վեր. հղ. 6, §§80-81



սահմանափակվել միայն ներպետական օրենսդրությամբ, չնայած Կոնվենցիայի կողմ պետությունների ընդհանուր սկզբունքները այնուամենայնիվ հարգվում են⁹:

Այսպիսով ՄԻԵԴ-ը Էնգելի և այլոց գործում հայտնաբերեց քրեական պատիժ, չնայած առկա էր հիշյալ պատասխանատվության ներպետական դասակարգումը որպես կարգապահական պատասխանատվություն: ՄԻԵԴ-ը պատասխանատվությունը որակել էր որպես քրեական, ուստի առկա էր Կոնվենցիայի խախտում, որովհետև ներպետական օրենսդրությունը չէր ապահովել որոշակի երաշխիքներ, որոնք կապահովվեին՝ լինեին արարքները դասակարգված որպես քրեական:

Էնգելի և այլոց գործից սկսած ՄԻԵԴ-ը կիրառում է ինքնավար հասկացությունների տեսությունը, որը նշանակում է, որ ներպետական օրենսդրությունում տրված սահմանումները և դասակարգումները որոշիչ չեն իր համար, որովհետև պետությունները կարող են սխալ դասակարգել այս կամ այն արարքը, որպեսզի Կոնվենցիայով տրամադրվող իրավունքներն ու երաշխիքները չտարածվեն վերջիններիս վրա:

Արարքը կամ պատասխանատվությունը քրեական որակելու համար ՄԻԵԴ-ը առանձնացրել է երեք *ոչ կոմուլյատիվ* չափանիշներ, այն է՝ (ա)ինչպես է որակված արարքը ներպետական օրենսդրությունում, (բ)արարքի բնույթը և (գ)պատասխանատվության խստությունը: Սրանք հայտնի են որպես Էնգելի չափանիշներ՝ ըստ համանուն գործի¹⁰:

⁹ Տե՛ս *Letsas* վեր. հղ. 4, 282

¹⁰ «*Criterion*» բառը Պայքար և հաղթանակի գործի պաշտոնական թարգմանությունում թարգմանվել է որպես չափանիշ: Տե՛ս աղջանց: ՀՀ Արդարադատության նախարարություն, <http://moj.am/am/download.php?view.125>



Էնգելի չափանիշները

Էնգելի չափանիշների միջոցով որոշվում են իրավահարաբերությունների բնույթը՝ քրեական են դրանք, թե՛ ոչ: Էնգելի և այլոց գործում ՄԻԵԴ-ը այս չափանիշները կիրառեց կարգապահական իրավահարաբերությունների վրա: Հետագայում այս չափանիշները կիրառվեցին նաև այլ իրավահարաբերություններում:

Օգթյուրքն ընդդեմ Գերմանիայի գործում որպես ինքնավար հասկացություն դիտվեց «քրեական» հասկացությունը: Օգթյուրքի գործում վերջինիս նկատմամբ կիրառվել էր տուգանք, որը նախկինում եղել էր քրեական, հետո ապաքրեականացվել էր ու դարձել ճանապարհատրանսպորտային վարչական իրավախախտում: Արդյունքում Օգթյուրքի նկատմամբ այն կիրառվել էր առանց այն երաշխիքների, որոնք նա կունենար, եթե Գերմանիայի ներպետական օրենսդրությունում արարքը լիներ դասակարգված որպես քրեական (չնայած առկա էր դատավարական իրավունքի որոշակի կիրարկում ըստ անալոգիայի)¹¹: ՄԻԵԴ-ը նորից հաշվի չառավ ներպետական դասակարգումը և կիրառեց ինքնավար հասկացությունը: ՄԻԵԴ-ն ինքը որոշեց՝ արարքը քրեական է, թե՛ վարչական՝ եզրակացնելով, որ առաջինն է, որովհետև պատասխանատվությունն իր բնույթով խիստ էր, պատժիչ նպատակ ուներ, զսպիչ էր (*deterrent*), ինչպես նաև տուգանք էր¹²: Այսպիսով, արարքն էր իր բնույթով քրեական էր (երկրորդ չափանիշ):

Ադոլֆն ընդդեմ Ավստրիայի գործում ինքնավար հասկացություն համարվեց քրեական մեղադրանքը (*criminal charge*)¹³: Ադոլֆին ներգրավել էին որպես մեղադրյալ: Ավստրիայի Դիստրիկտային դատարանը հաստատել էր նրա կողմից

¹¹ Տե՛ս Case of Öztürk v. Turkey, 22479/93, §§51-52 ECHR 1999-VI [Ozturk Case]

¹² Տե՛ս նույնում §53

¹³ Տե՛ս Case of Adolf v. Austria, 8269/78, §30 ECHR 1982-A49



կատարված արարքի առկայությունը, այնուհետև գործը կարճվել էր արարքի ծանրության բացակայության հիմքով (պատժելի չէր)՝ չնայած Ադուլֆը փորձում էր վիճարկել հենց արարքի առկայությունը գործը կարճելուց հետո, որը նրան չէր հաջողվել, որովհետև ձևական առումով գործը փակվել էր: Ավստրիայի կառավարությունը պնդում էր, որ գործը կարճելու հետևանքով քրեական մեղադրանք այլևս չկար, ուստի Կոնվենցիայի 6-րդ հոդվածով պաշտպանվող իրավունքները կիրառելի չէին Ադուլֆի նկատմամբ, ինչը, սակայն, ՄԻԵԴ-ի համար համոզիչ չէր, որովհետև առկա էր նշում Ադուլֆի կողմից արարքի կատարման և վերջինիս մեղավորության մասին¹⁴: Այսինքն ՄԻԵԴ-ի համար դեռ առկա էր մեղադրանք և այդ մեղադրանքի դեմ Ադուլֆի պաշտպանությունը սահմանափակելը գործի ձևական փակման արդյունքում վերջինիս արդար դատական պաշտպանության իրավունքի խախտում էր:

Դրվիրն ընդդեմ Բելգիայի գործում նույնպես կիրառվեց հիշյալ ինքնավար հասկացությունը: Այնտեղ քրեորեն պատժելի արարք կատարած լինելու հիմքով Դրվիրին մեղադրանք առաջադրելու և նրա խանութը փակելու ռիսկի էին արժանացրել, եթե վերջինս չմոծեր տուգանքը. սա կատարվել էր «հաշտության գործընթացի» ձևով: Դրվիրը մոծել էր տուգանքը, և քրեական գործ չէր հարուցվել: Արդյունքում չէին կիրառվել դատական պաշտպանության երաշխիքները քրեական վարույթում. ՄԻԵԴ-ը քրեական մեղադրանքի առաջացման համար այն պահը ընդունեց, երբ «անձին իրավասու մարմնի կողմից պաշտոնական տեղեկացում է արվել այն մասին, որ նա կատարել է քրեորեն պատժելի արարք»¹⁵, ինչը Դրվիրի դեպքում վերջինիս իրազեկումն էր, որ նա կատարել է քրեորեն պատժելի արարք, և նրա նկատմամբ քրեական գործ կհարուցվի, եթե նա չվճարի տուգանքը: Այսինքն

¹⁴ Տե՛ս նույնում §39

¹⁵ Տե՛ս Case of Deweer v. Belgium, 6903/75, §46 ECHR 1980-A35



մեղադրանքի առաջադրման պահին էլ է գնահատվում ինքնավար հասկացության տեսանկյունից: Սա ցույց է տալիս, թե որ պահից են ենթակա կիրառման քրեաիրավական երաշխիքները:

Էքլն ընդդեմ Գերմանիայի գործում էլ այս սկզբունքով որոշվեց մեղադրանք առաջադրելու պահը, իսկ այդ պահից սկսած հաշվվեց գործի քննության ողջամիտ ժամկետը¹⁶:

Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի և Գալստյանն ընդդեմ Հայաստանի գործերում ՄԻԵԴ-ը նույնպես կիրառել է հիշյալ ինքնավար հասկացությունը: Գալստյանի գործում վերջինիս նկատմամբ կիրառված վարչական կալանքը իր բնույթով զսպիչ էր և պատժիչ, ինչպես նաև ուներ անհրաժեշտ խստություն, հետևապես ՄԻԵԴ-ը գտավ, որ Գալստյանի գործը քրեական էր¹⁷:

Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի գործում ՀՀ Վճռաբեկ դատարանը իրավունք չունեի չքննելու կազմակերպության՝ հարկային պարտավորությունների, ինչպես նաև տույժեր և տուգանքներ վճարելու վերաբերյալ գործը՝ պետական տուրքը չվճարելու հիմքով, որովհետև այդ գործը նույնպես իր բնույթով քրեական էր: ՄԻԵԴ-ը նշեց, որ «հարկային վեճերը գտնվում են 6-րդ հոդվածով սահմանված քաղաքացիական իրավունքների և պարտականությունների շրջանակից դուրս, չնայած այն նյութական հետևանքներին, որոնք դրանք անխուսափելիորեն առաջացնում են հարկատուի համար [...]: Այնուամենայնիվ, երբ նման դատավարությունը ներառում է տույժերի և տուգանքների նշանակում, այն կարող է որոշակի հանգամանքներում գրավել 6-րդ հոդվածով սահմանված երաշխիքները վերջինիս «քրեական» մասի ներքո [...]»¹⁸: Այնուհետև ՄԻԵԴ-ը գտավ,

¹⁶ Stü Case of Eckle v. Germany, 8130/78, §71 ECHR 1982-A51

¹⁷ Case of Galstyan v. Armenia, 26986/03 §§58-59 ECHR 2007

¹⁸ Case of Paykar yev Haghtanak LTD v. Armenia, 21638/03 §32 ECHR 2007



որ հարկային օրենսդրությամբ նախատեսված տույժերն ու տուգանքները կանխարգելիչ և պատժիչ նպատակ ունենին, հետևապես իրենց բնույթով քրեական էին¹⁹: Վճռաբեկ դատարանը մերժել էր կազմակերպության իրավունքների դատական պաշտպանությունը, ինչպես նաև գրկել էր նրան քրեական գործով մեղադրյալի ունեցած երաշխիքներից:

Հիշյալ չափանիշները ՄԻԵԴ-ը կիրառում է տվյալ գործի փաստական հանգամանքների նկատմամբ արդեն իսկ անկախ նախկին գործերի փաստական հանգամանքների էությունից: Այս չափանիշները պատրաստի կանոններ են: Անդրադառնանք վերջիններիս:

ա. Արարքի որակումը ներպետական օրենսդրությունում որպես քրեական ինքնին վկայում է, որ արարքը քրեական է, նույնիսկ եթե տեսականորեն ենթադրվի, որ օրենսդիրը կարող էր սխալ դասակարգել արարքը և օրինակ՝ քրեական օրենսգրքում սխալմամբ ներառել: Ներպետական դասակարգումը որպես քրեական արդեն իսկ էստոպել է պետություն համար: Այս դեպքում ՄԻԵԴ-ը միանգամից քննարկում է, թե Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ինչպես է խախտվել: Սակայն հակառակ տրամաբանությունը այստեղ չի գործում. եթե ներպետական օրենսդրության մեջ արարքը չի դասակարգվել որպես քրեական, ապա այդ հանգամանքը ՄԻԵԴ-ի համար որոշիչ չէ, և նա կիրառում է մյուս չափանիշները՝ առաջնորդվելով վերևում քննարկված տրամաբանությամբ²⁰:

բ. Երկրորդ չափանիշը, արարքի բնույթը, համարվում է առաջինի համեմատ ավելի կարևոր²¹: Երկրորդ որոշարկչի տեսանկյունից հետևյալ գործոններն են էական:

¹⁹ Տե՛ս նույնում §§35-36

²⁰ Տե՛ս Key case-law issues, Compatibility *ratione materiae* : criminal charge (article 6.1), online: <http://www.echr.coe.int/ECHR/EN/Header/Case-Law/Case-law+information/Key+case-law+issues/> [Issues]

²¹ Տե՛ս օրինակ Case of Jussila v. Finland, 73053/01, §38 ECHR 2006 [Jussila Case]



1. կիրառվող կանոնը ուղղված է որոշակի անձանց խմբի, թե ունի կիրառման համընդհանուր բնույթ²²,
2. վարույթը կատարվում է հարկադիր կիրարկման լիազորությամբ օժտված հանրային մարմնի կողմից²³,
3. կանոնն ունի պատժիչ կամ զսպիչ բնույթ²⁴,
4. կանոնի կիրառումը պայմանավորված է մեղքի ապացուցմամբ²⁵,
5. ինչպես են այն Եվրոպայի խորհրդի անդամ պետություններում դասակարգված նմանատիպ արարքները²⁶:
6. այն փաստը, որ արարքը դատվածություն չի առաջացնում կարող է հաշվի առնվել Դատարանի կողմից, սակայն դա որոշիչ չէ, որովհետև նույնպես սահմանված է ներպետական օրենսդրությամբ²⁷:

Այս գործոնները կումուլյատիվ չեն, սակայն դատարանը որոշ դեպքերում գնահատում է նաև դրանց կումուլյատիվ քաշը²⁸:

²² Տե՛ս օրինակ *Case of Bendenoun v. France*, 12547/86, §47 ECHR 1994-A284 [*Bendenoun Case*]

²³ Տե՛ս օրինակ *Case of Benham v. United Kingdom*, 19380/92, §56 ECHR 1996-III

²⁴ Տե՛ս օրինակ *Bendenoun Case* վեր. հղ. 20: Տե՛ս նաև *Ozurk Case* վեր. հղ. 9, §53

²⁵ Տե՛ս օրինակ *Engel Case* վեր. հղ. 5,

²⁶ Տե՛ս նույնում:

²⁷ Տե՛ս օրինակ *Case of Ravensborg v. Sweden*, 14220/88, §38, ECHR 1994-A283-B: Բաժնաբերի գործում դատվածության չառաջանալը ՄԻԵԴ-ը գնահատել է ոչ թե ներպետական կարգավորման տեսանկյունից (չնայած հղում է կատարում վերջինիս վրա), այլ այն տեսանկյունից, որ Բաժնաբերի արարքը, եթե ներպետական դատարանի կողմից առանձին վարույթի շրջանակներում քննվեր, այդ դեպքում նոր ներպետական դատարանը իրականացնելու էր «քրեական վարույթ»: Տե՛ս նաև նույն գործում պատասխանատվության խստությունը, որը նույնպես անբավարար էր արարքը քրեական որակելու համար: Հակառակ դեպքում առկա կլիներ մի գործ, որը ավելի նման է Դրվիրի գործին:

²⁸ Տե՛ս օրինակ *Jussila Case* վեր. հղ. 20, §31



գ. Երրորդ չափանիշը՝ պատասխանատվության խստությունը որոշվում է կիրառվող սանկցիայի առավելագույն չափով²⁹:

Հիշյալ չափանիշներից մեկի առկայության դեպքում Կոնվենցիայի 6-րդ հոդվածը ենթակա է պարտադիր կիրառման:

²⁹ Տե՛ս Case of Campbell and Fell v. The United Kingdom, 7819/77; 7878/77, §72 ECHR 1984-A80: Քրեական մեղադրանք, պատիժ և հանցանք հասկացությունները ՄԻԵԴ-ի համար փոխկապակցված են և նա դրանցից յուրաքանչյուրի առկայությունը որոշում է նույն վերոնշյալ չափանիշներով: Այսինքն այդ չափանիշների միջոցով պարզվում է իրավահարաբերության բնույթը և որոշում Կոնվենցիայի կիրառելիությունը: Այն բնագավառը, որտեղ ՄԻԵԴ-ը արդեն կիրառել է վերոհիշյալ չափանիշները, շատ լայն է: Տե՛ս *Issues* վեր. հղ. 18:



Չափանիշների և երաշխիքների կիրարկումը վարչաիրավական հարաբերություններում

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կիրառելիությունը պարզելու համար վերոնշյալ չափանիշները անհրաժեշտ է կիրառել կոնկրետ վարչաիրավական հարաբերությունների վրա: Այսպիսով վարչական տուգանքները կենթարկենք էնգելի թեսթին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի նորմերի մեծ մասը իրենց ծանրությամբ, այն է՝ սանկցիաների հնարավոր առավելագույն չափերով, ծանր են ինչպես քրեական պատիժները, կամ երբեմն նույնիսկ ավելի ծանր: Եթե քրեական տուգանքների սահմանը սկսվում են նվազագույն աշխատավարձի երեք հազարապատիկից³⁰, ապա դա տրամաբանորեն այն սահմանն է, որով որոշվել է քրեական սանկցիայի նվազագույն խստությունը: Վարչական իրավախախտումների համար նախատեսվող տուգանքները ոչ միայն մեծամասամբ անցնում են դրամական քրեական պատասխանատվության նվազագույն շեմը, այլ երբեմն նրանց առավելագույն խստության աստիճանն ավելի բարձր է. մինչդեռ հայրենական դոկտրինան սովորաբար վարչական տուգանքները բնութագրում էր որպես ավելի մեղմ: Մյուս կողմից, համաձայն Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 6-րդ հոդվածի՝ վարչական պատասխանատվության նպատակն է «վարչական իրավախախտում կատարած անձին դաստիարակել [...] օրենքները պահպանելու, [...] համակեցության կանոնները հարգելու ոգով, ինչպես նաև կանխել ինչպես իր իսկ՝ իրավախախտողի, այնպես էլ ուրիշ անձանց կողմից

³⁰ Ըստ ՀՀ Քրեական օրենսգրքի՝ «[տ]ուգանքը դրամական տուժանք է, որը նշանակվում է ոչ մեծ և միջին ծանրության հանցանքների համար [ՀՀ Քրեական] օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում և [ՀՀ Քրեական] օրենսգրքով նախատեսված սահմաններում՝ պատիժ նշանակելու պահին Հայաստանի Հանրապետությունում օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի (այսուհետ՝ նվազագույն աշխատավարձ) երեսնապատիկից երեքհազարապատիկի չափով»: Տե՛ս ՀՀ Քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407, հ.51, մաս 1, 18.04.2003



նոր իրավախախտումների կատարումը»³¹. այս ձևակերպումից բխում է, որ վարչական տուգանքները ունեն զսպիչ և պատժիչ բնույթ: Սանկցիաների հնարավոր առավելագույն չափը Էնգելի երրորդ չափանիշն է: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով ամրագրված վարչական պատասխանատվության կանչելու նպատակը բավարարում է Էնգելի երկրորդ չափանիշը: Ավելին, վարչական տույժ նշանակելիս հաշվի է առնվում անձի մեղքը,³² ինչը նույնպես բավարարում է Էնգելի երկրորդ չափանիշը:

Եթե կոնկրետ վարչաիրավական պատասխանատվությունը բավարարում է Էնգելի թեսթի որևէ որոշարկչի, ապա այն անձը, ում նկատմամբ նրանք պատրաստվում են կիրառվել, ձեռք է բերում մեղադրյալի կարգավիճակ, և հետևապես նրա համար պետք է ապահովվեն, ի թիվս այլոց, հետևյալ իրավունքներն և երաշխիքները.

1. օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի իրավունք,
2. արդար դատաքննության իրավունք,
3. ինքն-իր դեմ հանդես գալու բացառման և լռության իրավունք,
4. կողմերի հավասարության իրավունք,
5. իր գործի՝ ողջամիտ ժամկետում քննության իրավունք,
6. դատավճռի՝ դռնբաց նիստում հրապարակման իրավունք,
7. անմեղության կանխավարկածի իրավունք,

³¹ Տե՛ս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, ՀՍՍՀԳՍ 1985/23, հ.22, 06.12.1985: Հիշատակման է արժանի նաև այն հանգամանքը, որ օրենսգիրքը ունի համընդհանուր կիրառություն:

³² Տե՛ս նույնում, հհ.9 և 32



8. ներկայացված մեղադրանքի և հիմքի մասին անհապաղ և հասկանալի լեզվով տեղեկացվելու իրավունք,
9. պաշտպանությունը նախապատրաստելու համար բավարար ժամանակի և հնարավորությունների իրավունք
10. անձամբ կամ դատապաշտպանի միջոցով պաշտպանության իրավունք,
11. անվճար դատապաշտպանի իրավունք,
12. վկաների հարցաքննության իրավունք,
13. թարգմանչի անվճար օգնության իրավունք³³:

Այս իրավունքների օրենսդրական ապահովվածության ստուգման ժամանակ կարելի է փաստել, որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրքը և Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքը որոշակի իրավահարաբերություններում խախտում են Կոնվենցիան, որովհետև չեն ապահովում վերոհիշյալ իրավունքների և երաշխիքների մի մասը՝ ձևավորված լինելով քաղաքացիադատավարական հարաբերություններին համահունչ³⁴:

Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է՝ «[ա]նձի և վարչական մարմնի փոխհարաբերություններում ապացուցման պարտականությունը կրում է՝ ա) անձը՝ նրա համար բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում. բ)

³³ Տե՛ս ընդհանուր *Leach* վեր.հղ. 1

³⁴ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենքին անդրադառնում ենք, որովհետև վարչական վարույթի ժամանակ է սկսվում «քրեական մեղադրանքի առաջադրման պահը»: Տե՛ս Ադուֆի գործը վերևում:



վարչական մարմինը՝ անձի համար ոչ բարենպաստ փաստական հանգամանքների առկայության դեպքում»³⁵: Հոդվածի ամբողջական վերլուծությունը ցույց է տալիս, որ վարչական վարույթում, անձի վրա դրվում է ապացուցման պարտականություն՝ թեպետև՝ միայն բարենպաստ հանգամանքների ապացուցման պարտավորության ձևով:

Համաձայն ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 25 և 26-րդ հոդվածների՝ ապացուցման բեռը կրում է այն կողմը, որը պարտավոր է դատարանին ներկայացնել իր տիրապետման տակ կամ ազդեցության ոլորտում գտնվող ապացույցները, որոնցով նա հիմնավորում է իր պահանջները կամ առարկությունները³⁶: Օրենսգիրքը որդեգրել է ապացույցների պարզ հավանականության թեսթը՝ «[վերաբերելի է այն ապացույցը, որը ավելի կամ պակաս հավանական է դարձնում վեճը լուծելու համար էական նշանակություն ունեցող որևէ փաստի գոյությունը, քան այն կլիներ առանց այդ ապացույցի]»³⁷: Ապացուցման կարիք չունեն նաև այն փաստերը, որոնք հակառակ կողմը չի վիճարկում³⁸: Ավելին, վարչական տուգանք նշանակելիս վարչական մարմինը կայացնում է վարչական ակտ, որը չվճարվելու դեպքում մարմինը դիմում է Վարչական դատարան Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով ամրագրված բռնագանձման պահանջով: Այս դեպքում ապացուցման բեռը առհասարակ շուտ է գալիս պատասխանող կողմի վրա և նա է պարտավորվում վիճարկել վարչական ակտը՝ վերջինիս հետ համաձայն չլինելու

³⁵ Տե՛ս Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք, ՀՕ-41-Ն, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413, 18.02.2004

³⁶ Տե՛ս ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք, ՀՕ-269-Ն, ՀՀՊՏ 2007.12.19/64(588) Հոդ.1300, 28.11.2007

³⁷ Տե՛ս նույնում, հ.23

³⁸ Տե՛ս նույնում, հ.25



դեպքում: Արդյունքում պատժելի արարքի կատարման մեջ մեղադրվող անձին պարտադրվում է ապացուցել սեփական անմեղությունը:

Այսպիսով նման հարաբերությունները խախտում են, ի թիվս այլոց, արդար դատաքննության իրավունքը, լռության իրավունքը, ինչպես նաև անմեղության կանխավարկածի իրավունքը: Իսկ այն հանգամանքը, որ պետական դատարանը ընդունում է վարչական ակտի հավաստիությունը տուգանքի բռնագանձման պահանջի ժամանակ՝ կողմերի հավասարության իրավունքի խախտում է, որովհետև վարչական մարմնի ակտը, և հետևապես՝ վարչական մարմինը ձեռք է բերում ապացուցողական առավելություն հակառակ կողմի նկատմամբ:

Համաձայն Վարչական դատավարության օրենսգրքի 58-րդ հոդվածի 7-րդ մասի՝ «[ն]երկայացուցիչների ծախսերը վճարում է նրան ներգրավված դատավարության մասնակիցը»: Այսինքն անվճար դատապաշտպան չի տրամադրվում: Օրենսգրքով չի նախատեսված նաև թարգմանչի անվճար օգնություն:

Հետևապես օրենսդրական ասպիսի կարգավորումների դեպքում Կոնվենցիայի 6-րդ հոդվածը խախտվում է:



Դատավարական հարցեր, օրենսդրական կարգավորումներ և մեկնաբանության խնդիրներ

Ինչպես արդեն նշվել է, այն դեպքում, երբ օրենսդիրը իրականացրել է իրավահարաբերության սխալ դասակարգում կամ վերադասակարգում, դատական վերահսկողությունն է, որ հայտնաբերում է սխալը և շտկում այն կոնկրետ գործի շրջանակներում՝ իր իրավասությունների սահմաններում և եթե առկա է ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտ կիրառելու հնարավորություն³⁹: Պետական դատարանը ոչ թե վերադասակարգում է՝ տեղափոխելով իրավահարաբերությունը մի օրենքից մյուսը՝ իր ճիշտ ոլորտը, այլ վերագնահատում է այդ իրավահարաբերությունը՝ վերջինս լրացնելով բացակայող իրավունքներով և երաշխիքներով: Մի կողմից այսպիսի լուծումը պարզ է, որովհետև այն բխում է պետության ստանձնած միջազգային պարտավորությունների իրացման արդյունավետությունից, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մակարդակի բարձրացումից, միջազգային իրավական նորմերի ուղղակի և օրենքների համեմատ գերակա կիրառումից⁴⁰, մյուս կողմից այսպիսի լուծումը կիրառելի չէ ձևական նկատառումներով:

ՄԻԵԴ-ը օրենսդիր մարմին չէ պետությունների համար, այն չի կարող վերջիններիս համար իրավական նորմեր սահմանել. անգամ երբ ՄԻԵԴ-ը կիրառում է ընդհանուր

³⁹ Սրա մասին տես ներքևում:

⁴⁰ Միջազգային իրավական նորմերի ուղղակի և օրենքների հանդեպ գերակա կիրառելիությունը նախատեսվում է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածով: «Միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են այդ նորմերը»: Տես ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ, 27.11.2005: Այսպիսով, ՄԻԵԴ-ի չափանիշները բացահայտում են Կոնվենցիայում ամրագրված միջազգային պարտավորությունների բովանդակությունը, հետևապես ներպետական օրենսդրությունը հակասում է պետության միջազգային պարտավորությանը, որովհետև հակասում է այդ պարտավորության բովանդակությանը:



միջոցներ, այն է, օրինակ՝ որոշում է, որ պետության օրենսդրությունը պետք է փոփոխվի, այդ փոփոխությունը նորից պետության ինքնիշխանության խնդիրն է: Այսինքն ՄԻԵԴ-ի մշակած չափանիշները պետությունների համար պարտադիր չեն, որովհետև պետություններն իրենք են որոշում իրենց ներպետական քաղաքականությունը: Ավելին, ՄԻԵԴ-ում չկա դատական նախադեպի ձևական ինստիտուտ. ՄԻԵԴ-ը հղում է կատարում իր նախկին որոշումների վրա քվազի-նախադեպային տարբերակով՝ իրավական որոշակիության և կանխատեսելիության նկատառումներով միայն⁴¹:

Մյուս կողմից, որևէ պետություն չունի պարտավորություն՝ իր ներսում կիրառելու մեկ այլ պետության նկատմամբ կայացված ՄԻԵԴ-ի որոշումը. այն գործում, որտեղ ՄԻԵԴ-ը հայտնաբերում է, որ ներպետական օրենսդրությունը խախտում է Կոնվենցիայի դրույթները, ՄԻԵԴ-ի այդ որոշումը վերաբերվում է տվյալ երկրին միայն, չնայած հարևան երկրում հնարավոր է գործում է համանման օրենսդրություն: Այսինքն, պետությունները ձևականորեն չունեն պարտավորություններ պարտադիր կիրառելու ՄԻԵԴ-ի չափանիշները: Սա նշանակում է, որ պետությունը չի խախտել Կոնվենցիան, քանի դեռ չկա այդ մասին ՄԻԵԴ-ի որոշում:

Մյուս կողմից էլ ձևական խնդիրներ են առկա Հայաստանի ներպետական օրենսդրությունում: ՀՀ Դատական օրենսգիրքը ամրագրում է *stare decisis* սկզբունքն այնպես, որ նախադեպի կիրառումը դրվում է անպայման կախվածության մեջ գործում առկա փաստական հանգամանքների նախկինում քննված գործերին

⁴¹ Տե՛ս Leach վեր. հղ. 1, 165



համանմանության հանգամանքից⁴², մինչդեռ ՄԻԵԴ-ի չափանիշները արդեն ունեն ինքնուրույն բնույթ և կիրառվում են փաստական հանգամանքների վրա՝ նախորդող գործով փաստական հանգամանքներից անկախ:

Այնուհետև, ո՛չ ՄԻԵԴ-ի որոշումները, ո՛չ էլ նրա սահմանած չափանիշները միջազգային պայմանագրեր չեն, հետևապես պետական դատարանները չեն կարող դրանց՝ օրենքի հետ հակասության դեպքում վերջիններիս տալ ավելի բարձր իրավաբանական ուժ քան օրենքներին⁴³, որովհետև այդ որոշումներն ու չափանիշները վերոնշյալ պատճառներով չունեն պարտադիր ուժ Հայաստանի համար: Բացի դրանից, պետական դատարանները կարող են մեկնաբանել օրենքը, բայց ոչ փոփոխել այն. իսկ ՄԻԵԴ-ի չափանիշներին պարտադիր ուժ տալը ձևական առումով հնարավոր է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Դատական օրենսգրքի և Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի միայն այնպիսի լայն մեկնաբանության դեպքում, որ հիշյալ չափանիշները ևս դիտվեն որպես օրենքի նորմերի հանդեպ գերակա նորմեր:

⁴² «Որոշակի փաստական հանգամանքներ ունեցող գործով վճռաբեկ դատարանի կամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական ակտի հիմնավորումները (այդ թվում՝ օրենքի մեկնաբանությունները) պարտադիր են դատարանի համար նույնանման փաստական հանգամանքներով գործի քննության ժամանակ, բացառությամբ այն դեպքի, երբ վերջինս ծանրակշիռ փաստարկների մատնանշմամբ հիմնավորում է, որ դրանք կիրառելի չեն տվյալ փաստական հանգամանքների նկատմամբ»: Տե՛ս ՀՀ Դատական օրենսգրքը, ՀՕ-135-Ն, ՀՀՊՏ 2007.04.18/20(544) Հոդ.489, հ.15 մաս 4, 21.02.2007:

⁴³ Համաձայն Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «[ի]րավական ակտերի միջև հակասությունների դեպքում գործում են [ՀՀ] Սահմանադրության և [Իրավական ակտերի մասին ՀՀ] օրենքով նախատեսված ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերը, բացառությամբ սույն հոդվածի յոթերորդ մասով նախատեսված դեպքերի»: Այսպիսով Իրավական ակտերի մասին ՀՀ օրենքը իրավաբանական հակասության հարցը լուծում է իրավական ակտերի մակարդակում, որտեղ ՄԻԵԴ-ի չափանիշները այդպիսի ակտեր չեն հանդիսանում: Տե՛ս Իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, ՀՕ-320, ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ.344, 03.04.2002



Սակայն եթե նպատակը Կոնվենցիայի դրույթների իրացման ապահովումն է, այդպիսի լայն մեկնաբանությունն անհրաժեշտ է⁴⁴:

Այսպես, օրինակ՝ այն դեպքում, երբ պետական դատարանը հայտնաբերում է, որ հիշյալ չափանիշները կիրառելի են տվյալ տուգանքի բռնագանձման պահանջով վարչադատական տվյալ վարույթում, այդ դատարանը պետք է բաշխի ապացուցման պարտականությունը առանց պատասխանողի վրա ապացուցման բեռ դնելու՝ զուգահեռաբար հղում կատարելով Կոնվենցիայի և ՄԻԵԴ-ի չափանիշների վրա: Կամ երբ առկա է այդպիսի իրավահարաբերություն, պետական դատարանը՝ ելնելով արդարադատության շահերից՝ կողմին պետք է տրամադրի դատապաշտպանի կամ թարգմանչի անվճար օգնության իրավունք: Եթե այսպիսի մոտեցումը կարող է հանգեցնել իրավասությունների սահմանազանցման պետական դատարանի կողմից, օրենսդիրը պետք է օրենսդրական բարեփոխումների միջոցով դատական իշխանությանը տրամադրի համապատասխան իրավասությունը: Բացի դրանից, առաջարկվում է նաև ՄԻԵԴ-ի որոշումներին տալ ավելի լայն կիրառություն, քան զուտ որպես *stare decisis*՝ հիմնված միայն փաստական հանգամանքների համադրության վրա⁴⁵:

⁴⁴ ՀՀ դատական պրակտիկան ճանաչում է ՄԻԵԴ-ի եզրահանգումների ընդհանրական կիրառումը: «[ՄԻԵԴ-ի] դատական ակտի կիրառելիության հարցը լուծելիս դատարանը պետք է հաշվի առնի նաև այն, թե տվյալ դատական ակտի հիմնավորման բովանդակությունը կազմող ինչպիսի դրույթ է ենթակա կիրառման: Եթե այդ դրույթն իր բնույթով առավել ընդհանրական է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել փոքր ընդհանրություն: Եվ ընդհակառակը՝ եթե դրույթն իր բնույթով առավել կոնկրետ է, ապա կիրառման համար պահանջվում է փաստական հանգամանքների առավել մեծ ընդհանրություն»: Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ՎԲ-17/08-ի մասին, ՀՀՊՏ 2008.07.23/47(637), §26, 23.05.2008:

⁴⁵ Չնայած նորմի ձևակերպումը ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից մեկնաբանվել է այնպես, որ դատարանները պետք է դիմեն որոշակի ընդհանրացումների, այնուամենայնիվ պրակտիկայում այս մոտեցումը արդյունավետ չի կիրառվում, որովհետև չկա պատկերացում ընդհանրացման և կոնկրետացման սահմանների վերաբերյալ: Միևնույն ժամանակ անպայման կախվածություն է դրվում փաստական հանգամանքի առկայությունից: Տե՛ս վերևում: Ըստ մեր տեսակետի՝ որոշ դեպքերում ՄԻԵԴ-ի եզրահանգումները պետք է կիրառվեն լայն, իսկ որոշ դեպքերում էլ նույնիսկ՝ անկախ փաստական հանգամանքների նմանությունից:



Եզրակացություններ և առաջարկներ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված իրավունքների իրացումը ենթակա է ստուգման ՄԻԵԴ-ի չափանիշների միջոցով: Հետևապես իրավահարաբերությունների դասակարգումը և վերադասակարգումը պետք է արտացոլի չափանիշները, որպեսզի Կոնվենցիայով ամրագրված իրավունքները և երաշխիքները լինեն արդյունավետ: Այն դեպքում, երբ օրենսդիրը ձախողում է ըստ չափանիշների դասակարգել կամ վերադասակարգել իրավահարաբերությունները, դատական վերահսկողությունը պետք է ունակ լինի շտկելու խնդիրը՝ Կոնվենցիայով ամրագրված իրավունքները և երաշխիքները տրամադրելու և իրավահարաբերությունները վերջիններովս լրացնելու միջոցով: Որոշ դեպքերում անհրաժեշտ են դատավարական օրենսդրական բարեփոխումներ, մյուսներում հնարավոր է խնդրին լուծում տալ մեկնաբանության, *stare decisis*-ի կամ նրանում սահմանված չափանիշների ավելի լայն կիրառման միջոցով:



Օգտագործված գրականության ցանկ

Գրքեր

1. Chittharanjan F. Amerasinghe, Jurisdiction of International Tribunals (2003)
2. Philip Leach, Taking a Case to the European Court of Human Rights, 2nd ed. (2005)
3. George Letsas, The Truth in Autonomous Concepts: How To Interpret the ECHR, EJIL, Vol. 15, No. 2 (2004)

Միջազգային պայմանագրեր և դատական ակտեր

4. Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Nov. 4, 1950, Europ.T.S. No. 5; 213 U.N.T.S. 221.
5. Case of Engel and Others v. The Netherlands, 5100/71; 5101/71; 5102/71; 5354/72; 5370/72, ECHR 1976-A22
6. Case of Öztürk v. Turkey, 22479/93, ECHR 1999-VI
7. Case of Adolf v. Austria, 8269/78, ECHR 1982-A49
8. Case of Deweer v. Belgium, 6903/75, ECHR 1980-A35
9. Case of Eckle v. Germany, 8130/78, ECHR 1982-A51
10. Case of Galstyan v. Armenia, 26986/03, ECHR 2007
11. Case of Paykar yev Haghtanak LTD v. Armenia, 21638/03, ECHR 2007
12. Case of Jussila v. Finland, 73053/01, ECHR 2006
13. Case of Bendenoun v. France, 12547/86, ECHR 1994-A284
14. Case of Benham v. United Kingdom, 19380/92, ECHR 1996-III
15. Case of Ravensborg v. Sweden, 14220/88, ECHR 1994-A283-B
16. Case of Campbell and Fell v. The United Kingdom, 7819/77; 7878/77, ECHR 1984-A80



ՀՀ իրավական և դատական ակտեր

17. ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ՀՀՊՏ 2005.12.05/ Հատուկ, 27.11.2005
18. ՀՀ Քրեական օրենսգիրք, ՀՕ-528-Ն, ՀՀՊՏ 2003.05.02/25(260) Հոդ.407, 18.04.2003
19. ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրք, ՀՕ-269-Ն, ՀՀՊՏ 2007.12.19/64(588) Հոդ.1300, 28.11.2007
20. Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրք, ՀՍՍՀԳՍՏ 1985/23, 06.12.1985
21. Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին ՀՀ օրենք, ՀՕ-41-Ն, ՀՀՊՏ 2004.03.31/18(317) Հոդ.413, 18.02.2004
22. Իրավական ակտերի մասին ՀՀ օրենք, ՀՕ-320, ՀՀՊՏ 2002.05.21/15(190) Հոդ.344, 03.04.2002
23. ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումը քրեական գործ թիվ ՎԲ-17/08-ի մասին, ՀՀՊՏ 2008.07.23/47(637), 23.05.2008

Էլեկտրոնային աղբյուրներ

24. Key case-law issues, Compatibility *ratione materiae*: criminal charge (article 6.1), online: <http://www.echr.coe.int/ECHR/EN/Header/Case-Law/Case-law+information/Key+case-law+issues/>
25. Պայքար և հաղթանակ ՍՊԸ-ն ընդդեմ Հայաստանի Հանրապետության, աղցանց: ՀՀ Արդարադատության նախարարություն, <http://moj.am/am/download.php?view.125>



Armenian Open Legal Tumblog – Հայ բաց իրավաբանական բլոգ – Իրավաբանական բլոգ-վեբ կայք. հիմնադրվել է 2010թ. գարնանը որպես իրավաբանական համառոտ բլոգ՝ նպատակ ունենալով զարգացնել հայ իրավաբանական միտքը ինտերնետ համայնքում, հնարավորինս մատչելի կերպով մատուցել իրավաբանական բովանդակությամբ նյութ մասնագետ և ոչ մասնագետ օգտվողներին, ինչպես նաև հիմնել իրավաբանների համագործակցություն բլոգային ֆորմատով:

Բլոգում հրապարակվում են վերլուծություններ, հոդվածներ, դատական ակտերի համառոտագրեր, տեղեկատվական նյութեր, իրավական ակտերի և նորմերի բացատրություններ, ինչպես նաև կազմակերպվում են քննարկումներ, որոնց կարող են մասնակցել բոլորը:

<http://armenianlegal.info/>

Նյութն օգտագործելիս հեղինակին և Հայ բաց իրավաբանական բլոգին հղում կատարելը պարտադիր է: Նյութին հղում կատարելիս կարող եք օգտագործել հետևյալ ձևը. Գ. Հակոբյան, Հայաստանում քրեաիրավական երաշխիքների կիրառումը «վարչաիրավական» հարաբերություններում: ՄԻԵԴ չափանիշները և ՀՀ ներպետական իրավական խնդիրները, առցանց: Հայ բաց իրավաբանական բլոգ, <<http://armenianlegal.info/archives/687>>:

Սույն նյութի վաճառքն արգելված է: